

ԴՐՈՇԱԿ

Հ.Յ.Ն. ԲՈՒՄՅԱՆ
ՊԱՐԳԱՐԱՆԻ
A. R. F. BUREAU
LIBRARY

„ՀԱՅ ԵՆՂԱՓՈՒԱԿ. ԴՍՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՍԱՍՆՈՑ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԿՈՏՈՐԱԾԸ

ԿՈՒՒ ՆԱԽԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1. Մի քանի տարիներէ ի վեր Տալուրիկ և նրա օրինակին հետևելով այս տարի ևս Յէլիեզուզան, Իշինձոր, Աղբին, Ծիլմենք, Շենիկ, Սհմալ բազմահայ գիւղերը կը մերժեն բացարձակօրէն կառավարութեան սուրբ և շրջակայ քիւրդ-ցեղապետներուն խափարկութեան (աստիկանական) հարկ վճարելը նոցա կաշխատան հետեւել Շատախի, Բերմի, Խուլի, Խէյան և Փոսնայ գաւառի հայ բնակիչները և այս նպատակաւ կանաչաւուն և կհաշտեն ամեն տեղէ հարկահան օստիկանները: Փոսուրի տեղապահ կառավարիչը (գայմագամ) 37 օստիկաններով և քիւրդ հեծեալներով մի աւ մի կը ձերբակալէ բոլոր Խուլի և Խէյանայ հայ մեծամեծները, կը գայ Իշինձոր, կը բռնէ 4-5 հոգի և կը պահանջէ Տալուրիկէն Գասպար, Խաչօ, Փուրի, Գեղի, Գէլի, Գուչանէն, Կերօ (Պետոյի տնէն) և Շենիկէն Տէր Գրգօն: Սասունցիք ոչ միայն կը մերժեն յիշեալ անձինքը յանձնել, այլ և Իշինձորի մէջ յարձակվելով գայմագամի վրայ, կը սպաննեն օստիկանները և 12 քիւրդերը, միւսները կը փախն:

2. Մի քանի տարիներէ ի վեր սասունցոց քիւրդ աշխրաթներու (ցեղ) ընդդէմ ցոյց տուած թշնամական վարմունքը, յաճախակի կռիւները և երկուստեք տեղի ունեցած աւարառութիւնները, տարեկան սրոց (խափարութիւն) մերժումը, նամանաւանդ Տալուրիկի անցեալ տարուայ պատերազմը, որ հարիւրաւոր քիւրդեր ընկան, շրջակայ ցեղերը վերին աստիճանի կատղեցուցած և ի վրէժ գրգռած էին:

3. Բաղէշի կուսակալութեան տուած տեղեկութիւններէն կառավարութիւնը տեղեկացել էր, թէ օտարական զանազան անձնաւորութիւնք կը պահուին Սասնոյ մէջ, որոնք կաշխատին ժողովուրդը գրգռել ընդդէմ կառավարութեան և արտասահմանէն զէկքեր կը տեղափոխեն այստեղ և թէ արդէն Անտոյի սարը կազմուած է հայ հրօսակային խումբ մի, որ մշտական յարձակումներով սարսափ կաղդեն շրջակայ քիւրդերու վրայ:

ՄԵՐՏԻ ԸՆԹԱՑԷԸ

Բաղէշի կուսակալանիստ ժողովն մէջ, որ ներկայ էին Բաղարանցոց, Ռըշկոտանցոց, Խարրկանցոց, Փենջարի, Ծովասարի վերայ բնակող Խարրանցոց Բշէրնի մեծ աշխրապետն, Բէլիկցոց պետերը, Խոյմի Բոնախիփ բոլոր իշխանները, Մօղըլիանցի, Խէչանցի գլխաւորները, Բաղէկանցոց, Ծամըլգանցոց, Խըլկանցոց, Խէյանցոց և Յիկանիկի բոլոր ցեղապետները և հիւսիսային բերդերու Համիդիէյի հեծելազունաի Բէհմեդալին փաշան, այն որոշ կիրակացութեան յանգեցան, որ Սասունը իւր անառիկ դիրքով, անմատչելի սարերով և արիւնառւշտ ժողովրդով միշտ գլխաւոր վտանգ մ'է Օսմ կառավարութեան, որոյ ըմբոստ օրինակին կը հետեւին դրացի գաւառացիք, ուրեմն հարկաւ անհրաժեշտ է, որ ապստամբութիւնը խեղդուի դեռ իւր օրօրոցի մէջ, քանի դեռ նոցա բոլորովին անպատրաստ են: Հրաման տրուեցաւ բոլոր քիւրդ-ցեղերուն, որ անյապաղ գումարուին և չորս կողմէ յարձակուին Սասնոյ վրայ: Աներևակայելի արագութեամբ բոլոր շրջակայ կուսակալութեանց զօրքերը դիմեցին ի Մուշ, ուստի միայն 7869 հետեակներ, 1000-ի չափ հեծեալներ և 150 թնդանօթներ ուղևորուեցան ի Սասուն: Ռուսական և Պարսկական սահմանադիւնէն սկսեալ բոլոր ցեղերը գունդագունդ դիմեցին այստեղ միայն Բուլանջի Հայդարանցիք 300 հեծեալներով եկան, որով կարելի է գաղափար կազմել այն ահեղ բազմութեան վրայ, որ մէկ ակնթարթի մէջ տաշարեցին Սասուն գաւառը: Տեղացիք տեսան այդ փոթորկարեւր ամպերը, որ կը կուտակուէին իրենց ազատ սարերու վրայ, չորս կողմէն դիմող լռաբերները սարսափելի տեղեկութիւններ կհասցնեն. անոնք անգիտակից չէին թշնամու բազմութեան մասին, սակայն ուրախ սրտով կը սպասէին այդ «Մեծ որսին», ինչպէս իրանք կանւանէին (առանց մտքէ անցնելու, թէ իրենք ալ կարող էին ուրիշին որս ըլլալ): Դեռ արտերը չհնձած, ուրեմն մէկ օրուայ իսկ պաշար չունենալով, առանց վառօդի և գնտակի մեծ պաշարի բօրիկ օտերով, մէկ շապիկ հագին, ապաւինելով իրենց անառիկ սարերուն, իրենց քաջ բազուկներուն և որոտացող շէշխանաններուն և երկսայրի նաջախներուն:

Այստեղ գումարուած քիւրդերու թիւն է մօտաւորապէս 43000, Օսմանեան կառավարութեանէն զէկք և ռազմամթերք ստացած, իրենց ցեղապետներու և շէյխերու (շէյխը՝ Ձիլան) առաջնորդութեամբ, թուրք

բանակի 12300 զորաց: Տեա. իսկ հայոց թիւն անյայտ է, որովհետեւ կանայք և մանկունք ալ կը կուռին: Ահա զէնք ձարել և բռնել կրցողներու թիւը. 304 հրացանաւորներ, Տաւրոսիէն իւր գիւղերով 741 Քլլի գիւղէն, 209 Շէնիկէն, 160 ՍՏմալէն, 180 Իշխնձորէն, 34 Հէթիկէն, 120 Ալթիսէն և 208 Ալեանցոց գիւղէն:

* * *

27 յուր: Վալհակնցիք կը թալանեն Շէնիկի ոչխարները: Հայերը յետեւէն պնդելով կը խլեն իրենց աւարը, կայրեն Պուրդը կ'ամարանցի բոլոր քիւրդ վրանները և ահագին քանակութեամբ ոչխար և տաւար կը բերեն: Երկար արիւնհասեղ կուռ տեղի կուռնենայ. 2 հայ, 34 քիւրդ սպանուած են:

2 Օգոստ.: Շէնիկ և ՍՏմալ դաշտային, հետեւաբար ոչ ամուր դիրքի տէր և ենթակայ առաջին յարձակման, կը քօչեն դէպի անառիկ Գէլի: Քիւրդերը ահեղ բազմութեամբ կը յարձակուին, կայրեն Շէնիկ (106 տուն) և ՍՏմալ (85 տուն) և կը յարձակուին փախստականներուն վրայ: Առիւը կը տեւէ 7 ժամ մինչև օգնութեան կը հասնին Անտոքէն հրոսակները և 400 Գէլեցիները. քիւրդերն անհնարին կոտորածով կը փախչին Օսման վրաններու տակ, թողնելով դաշտի վրայ 354 դիակներ, որոնք մաս առ մաս կը թրատուին կատաղի Շէնիկցոց նախններու հարուածներու տակ: Հայոց կողմէն կորուստն է 17 Շէնիկցի, 8 ՍՏմալցի, 6 Գէլեցի, 3 Ալեանցի, 8 կանայք:

3 Օգոստ. Ըստ Տաճկ. երեկոյան ժամը 9-ին հնչեցին պատերազմական փողերը. յարձակում միւսնոյն ժամանակ Տաւրոսի, Իշխնձորի, Աղբիսի, Անդրի վրայ: Առուի կէտ նպատակի Գէլիկի՝ Հաւատորիկ գագաթին ուղեբեր կը տեղան կուռին անմասն Շատախու գիւղերուն վրայ: Սասնոյ լեռները միգապատ ամպերով ծածկուած են, կարծես հրաբխային լաւաններ կը հոսեն ամեն կողմէ. արեան գետեր, կարկտահար դիակներ: Աէս գիշերին կը գրաւեն Ալեանցոց գիւղն և կայրեն (165). կէս օրէն Գէլեցի Պետոսի տունը կայրուի. Պետոս միայնակ 27 հոգի սպանելէ վերջ, երբ այլևս վառօղ չի ունենար, սուսերամբեր կը յարձակուի և կը սպանուի: 13 վերքեր ստանալէ յետ: Գէլեցիք կը յաջողին յետ մղել թշնամին, որ 26 ժամ անընդհատ կուռելէ յետ, կը թողուան համար դիակներ ամեն կողմ միայն ի Գէլի յԱլեան և յԱնդոք 760 (բոլոր վիրաւորներ կը սպանուին): Հայոց կորուստն է. 23 գէլիցի, 15 ալեանցի, 14 շէնիկցի, 9 սՏմալցի, 7 իշխնձորցի, 6 աղբիսցի, 17 կանայք և 9 մատաղերամ մանուկներ, ընդամենը ձիշտ 100:

4, 5, 6 Օգոստ. Մշտական յարձակումներ երկուստեք: Միշտ հայերը յաջող են. անթիւ քիւրդ սպանուածներ: Հայերու կողմէն կը սպանուին միայն 5 ժարդ, 3 կին:

7 Օգոստ. Ուրբաթ լինելով՝ զինադուր եղաւ Օսմանցոց կողմէն: Հայերը՝ Գէլիցիք, Իշխնձորցիք, Ալիանցիք, Շէնիկցիք, ՍՏմալցիք կը գումարուին յԱնդոք. իսկ Տաւրոսիկցիք իրենց շրջակայքով ի Քրոնֆրու-Քար: Անդոք Գէլիկէն 45 րոպէ արևմուտք, առանձին գագաթ մ'է. կից հարաւէն Աբփի անապատ սարի հետ, յարմար

պաշտպանուելու, ընդարձակ արօտներ լերան գագաթին, հացի և աղի բացարձակ չգոյութիւն. այնտեղ հաւաքուած են 21745 հոգի բազմութիւն, ծեր թէ մանուկ, այր թէ կին, իրենց քօչերով միակ ուտեստն է մածուն, բանջար և անալի միս: Անտանելի նեղութիւններ և անտանելի ցուրտ:

8 Օգոստ. Ահեղ յարձակում. ուղեբերու որոտներէն կը թնդան սար ու ձոր: Շատախի բոլոր գիւղերու հասունցած արտերը և խոտի դէզերը կայրեն քիւրդ և օսմանցի հեծեալները: Գրքով աննկարագրելի է կատաղած մահամեղականներու բարբարոսութիւնը թշուառ և անպաշտպան ժողովրդեան վրայ: Յուսահատութեան աղաղակները, լաց ու կոծն ահեղ մարտի միջից կը հասնին Անդոք և կատաղի զայրոյթով կը լեցնեն բոլորի սրտերը: Գեղաշէն կայրուի ուղեբերու հարուածներու տակ: Սոսկալի կոտորած ի Սպաղնիք (Տաւրոսիկ), ուր հայ մը պաշտպանել ջանալով քիւրդ ցեղապետ մը յարձակողներէն, կսպանուի հարազատ եղօք ձեռամբ: Անթուրի կորուստներ, օգոստ. 3-ի ջարդէն շատ աւելի: Անթիւ զօրաց դիակներ. քիւրդերը կը փախչին, բայց Օսմանցիք անոնց միւս կողմէն թնդանութեամբ կ'մղեն ի մարտ: Անյուր շիթութիւն, իրարանցում: Առիւն անընդհատ 19 ժամ կը տեւէ:

10, 11, 12 Օգոստ. Մշտական յարձակում. անթիւ սպանուածներ, հայերու վառօղը իսպառ կը վերջանայ: Մի քիչ Տաւրոսիկէն կուղարկուի: Անտանելի սով:

13 Օգոստ. Ամենէն ահեղ կուռը, որ անընդհատ 27 ժամ կը տեւէ. յարձակում միստամանակ ամբողջ Սասնոյ չորս կողմերէն: Անդրոնը կրկին Գէլի և Անտոք: Ամալի Գէլի խիստ նեղ կացութեան մէջ է: Անտոքէն կը հասնին օգնութեան: Անեղակայելի քաջութիւն ու տրուականութիւն հայերու կողմէն: Նշանաւոր հանդիսացան Շէնիկցի Գրգօն, հրոսակներէն: Ադամը (18 տարեկան), Գէորգն և Արպօն: Ար պատմեն, թէ այդ գոռ կուռի ատենը, երբ թշնամին սկսաւ փախուստ տալ պատանի դիւցազնը՝ Ադամ, կայնած քարաժայռի մը վրայ, որոտացնելով ահեղ բերդանկան, կաղաղակէ. «Շներ, վատեր, փախէք, ըսէք ձեր մեծին, որ գայ այստեղ իւր սև զինուորներով: Սասունցիք ամենու համար ունին տաք գնտակներ: Անմիտներ, ինչո՞ւ դատարկ տեղ կը թափէք ձեր արիւնը. օրը տաքցեր է և հունձի ժամանակն հասեր. թողէք այս երկիրը, փախէք Արաբստան: Փախէք, ձեզմէ ոչ արու պիտի թողնենք, ոչ ալ էգ»: Երկուստեք կորուստն ահագին էր. միայն ի Գէլի և յԱնտոք սպանուեր են 675 քիւրդ և 236 հայ. մեծ մասամբ Գէլիցիներ և քանի մը հրոսակներ: Առուի դաշտի տէր դարձեալ հայերն են, բայց խեղճերու ռազմամթերքն արդէն իսպառ կը հատնի: Ար կողոպտուի Գէլի (360 տուն) և անոր եկեղեցին: (Քիւրդերը կը հաւաստեն, թէ արծաթազգեստ հեծեալ օրիորդ մը նիզակն ի ձեռին, ահեղ մարտնչով անյայտացաւ եկեղեցոյն մէջ:

14 Օգոստ. Քիւրդերը բացարձակ կը մերժեն Երկարել կուռը և կը սպառնան Օսմ. զօրաց: Փաշան պատահաբար ներ կը դրկէ յԱնտոք, Սուլթանի կողմէն ամենքին նե-

րողութիւն խնդրել, եղած վնասները պետական գանձէն դարմանել և Սասունը համիդդ ազատ կացուցանել խոստանալով:

Մուրատ կը կանչվի Տաւրոսիկէն: Կառաւորիկէ խաղաղութիւն, յայտնելով թէ առանց հացի և զինամթերք-պաշարի անկարող են երկար դիմադրել: Գրգօն կռիւ կը պահանջէ, յայտարարելով, թէ օսմանլին չէ կարող մոռանալ իւր կորուստները վաղ թէ անագան պիտի աշխատէ պատժել զմեզ, նոյն ըստէին, երբ մենք անպատրաստ կը լինինք. լաւ է, որ այսօր խառնենք մեր արիւնը մեր եղբայրներու արեան հետ և դուրս չծռենք անգութ օտարներուն: Ընորհակալ ենք այն բարեսըրտութենէն, որ Սուլթանը ցոյց կուտայ մեզ՝ փոխարինել ուզելով անձնական գանձէն մեր կորուստները: Հեռացէք մեր երկրէն և խաղաղութիւնն ինքն ըստ ինքեան տեղի կուենայ:

15 Օգ. փաշան յաջորդ օր անձամբ 500 հեծեալներով կուգայ Անդոքի ստորոտը և կը պահանջէ, որ մի քանի անձինք գան բանակցութեան. ուղղամթերքի հացի բացարձակ չգոյութիւնը կ'ստիպեն գոռոզ Սասունցուն զիջանել բանակցութեան. կընտրուեն 184 հրացանակիրներ և կ'իջնեն դաշտ. խօսակցութեան պահուն Գրգօն, որ կը դիտէ Անտոքի սարէն այս ամենը, կը տեսնէ զարմացմամբ, որ բլրակներու մէջէն գունդագունդ բանակներ կը պարփակեն գնացողները, և հրացանի որոտմամբ կազդարարէ անոնց. բայց այլ ևս ուշ էր: Յուսահատ և ահեղ կռիւ կը ծագի, դաշոյններով, սուրերով և նաջաններով կուրծք առ կուրծք: Լեռնաման դիակներով կը ծածկուի դաշտը: Կը տեսնէ Գրգօն ծերունի մը, որ թևերը քաշած, Գամասկեան ահեղ խենջարն ի ձեռին իրարու հետ դիակներ կը սրփռէ և անընդհատ կառաջանայ. անոր ետեւէն կերթայ իւր որդին, դայթելով դիակաց մէջ և աղաղակելով: «Հայր, հայր քաջազունք այսպէս կոստունն դիականց վերայէն»: Անոնցմէ ոչ մի կենդանի չի ձերբակալվիր, ոչ որ կուռէն խոյս չի տար, այլ ամենքը կընդունեն նահատակի պսակը արեամբ ներկուած, եռապատիկ թշնամիներու հոգիներ իջնցնելով ի թափս դժոխոց:

22 Օգ. Անդոք կը պաշարուի. Գէլըցիք, Իշխնձորցիք և Սհմայի կէսը կը դիմեն ի Ֆրուփո-Քար: Գրգօն իր շէնիկցիներով, Ալեանցոց ու մնացած Սհմայցոց հետ կը ամրանայ իւր տեղը, կուռելով կատաղօրէն ամբողջ 6 օր առանց վառօդի, քարերով և խենջարներով: Անսունդ, յոգնած և ուժասպառ մարդիկները կընկնին, անոնց կը փոխարինեն կանայք, կատաղած բորեաններու նման, որոց ձագերը յափշտակել կուզէ գիշխաննձ վագրը:

Անհնար լինելով այլևս կենալ անօթի և մերկ, Գրգօն կը յանձնէ Անտոքի պաշտպանութիւնը կանանց և ինքը մնացեալ քաջերով բօքիկ, մերկ, անօթի, ուժասպառ, առանց վառօդի, առանց գնդակի կիջնէ Խուլի և Խէյանք գաւառը հաց ու պարէն և ըստ կարելոյն ուղղամթերք ստանալու նպատակով: Կանցնի Աեփի, կը հասնի Հեղին:

23 Օգ. Մշտական յարձակմանց 24 ժամ շարունակ դիմանալով, սասունցի կանայք, բոլորովն ուժասպառ,

անկարող ահեղ թշնամոյն երկար դիմադրել, հետզհետէ կը քաշվին դէպի Աեփի. թուրքերը կը գրաւեն: Կանայք, գրկած մատաղերամ գաւակները՝ կը մարտնչեն ցան և ցիր, քարերով և խենջարներով ու կընկնին վերքերով ծածկված, յափշտակութիւն թշնամոյն:

Քստմեելի տեսարան. բոլոր մնացածները կը թրատվին անխնայ: Մանկանց դիակները կը ձօձեն նիզակներու վրայ. կանանց աղիքները սուրբերու ծայրերուն Յուսահատութիւն վերին աստիճանի, քաջութիւն աննկարագրելի: Երբ կհասնին ի Աեփի, զիրենք չորս կողմէ շրջապատուած կը տեսնան ահագին բազմութեամբ: Փխուստ կամ Գրգօյին միանալ անհնարին է այլևս: Քիւրդերը կը աղաղակեն, որ անձնատուր ըլլան, ապա թէ ոչ.... Սոսկում, իրարանցում, շփոթ, աղազակ, երեխայոց ճչերը երկինք կը թնդացնեն, Աեփի ստորոտէն կը գոռան թնդանօթներ: Գրգօյի հարսը՝ Շաքէ, կուռի մէջ հերոսուհի մը հանդիսացած է. կը մարտնչէ բարձր քարաժայռի վրայէն և կը խօսէ բարձրաձայն. «Սասունցի կանայք, ձեզի մնացեր է արդ որոշել թէ լաւ է գերի երթալ քիւրդին, ընդունել Մուհամեդի պիղծ օրէնքը, անպատուել ձեր անեղծ սրբութիւնը ի նախատինս ամբողջ հայութեան, թէ.... հետեւ իմ օրինակին». և հերարձակ, զուարդ, միամեայ երեխան ի ձեռին, կը խայանայ բարձր ժայռէն ցած, անյատակ անդունդի մէջ, քարքարոտ և ապառաժ, ուստի մի խունկ բխելով կը թռնայ Շէնիկցոց սրտերը, անոր արեամբ ներկուած.... անոր օրինակին հետեւեցան իւր ընկերուհիք մի առ մի, առանց տատանուելու, առանց շփոթելու և խեղճ տղայք հետեւեցան իրենց մայրերու օրինակին, անգիտակից իրենց բաղդին: Տեսաւ թշնամին և կանգ առաւ իրարու ետեւէ կը թափուին դիակները ձօձալով օդի մէջ անձայն, անմըռունչ և խոր անդունդը կը ծածկի դիակներով... վերջինները սաղ կը մնան իրենց քոյրերու դիակներու վրայ... Միայն 50-ի չափ կը ձերբակալուին և մի քանի հարիւր ալ մանկիկներ: Տանելով փաշայի առաջ կը հրամայեն, որ ընդունեն Մահմեդի օրէնքը. անարգանքով կը մերժեն: Խիստ պատիժներով շատ հարցեր կուտայ Մուրադի, Տաւրոսիկցոց, Գրգօյի և Գէլըցոց մասին, սակայն ոչոք յանձն կառնէ բառ մ'անգամ թողնել բերանէն: Անասելի չարչարանք, երկաթի շիկացած կաթսաներ և պրժգալի ցիցեր... Աերջպէս այն, ինչ որ կրնայ ստեղծել վայրենի լերանց փաշաներու վրէժխնդիր կատաղութիւնն անպաշտպան թշնամու վրայ...

24 Օգոստ. Քաջ Գրգօն իր անպարտելի խմբով ի պարտութիւն կը մատնուի Հեղինի սարը, ուստի տեսեր էինք Անդոքի և Աեփիի տեսարանները. ո՞վ կարող է նկարագրել թէ ինչ անզուսպ կատաղութեամբ ձօձելով դատարկ շէշխանները, շողացնելով սրերը, քարերով և նաջաններով անկարգ և շփոթ ամեն կողմէն կը յարձակին թշնամու վրայ, արեան ծովերով իրենց պապակեալ շուրթները, բոցավառ սրտերը, վրէժխնդիր հոգիները զովացնելու: Միայն 2 վերաւոր փախստականներ զերծանելով կը պատմեն այս ամենը: Ալեանց Աարդան, խենջար ի ձեռին կը թրատուի մաս առ մաս, հարիւրաւոր վերքերով ծածկուելէն յետոյ կընկնի անկենդան և դեռ

արիւնոտ խէնջարը դուրս չի գար անոր ձեռքերէն....
 Կընկնի Իշխնձորի վարդապետը, մինչ կաղօթէ բազկա-
 տարած և Փորթս գիւղի նորընծան, արիւնոտ դիակներով
 ծածկելով իւր հետքերը: Գրգօն վերահար գերի
 կընկնի, անօթութենէն ուժասպառ: Փաշայի առաջ կը
 բանայ աչքերը և հաց կուզէ. յանկարծ ինքնիրեն գա-
 լով կաղաղակէ. «Ա՜՞՞թ քեզ, Գրգօ, դու է՛լ օտարին
 վիզ պիտի ծուծես»: և խելով մէկի հրացանը կը դիմէ իր
 քաջերով փաշայի վրայ: Կը շողան սուրեր, կը շաչեն
 հրացաններ և նոցա որոտմանց մէջ կը լսուի քաջազնի
 վերջին խօսքը. «Կեցցէ՛ Հայաստան»:

ԿՈՌՈՒԻ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Գէլի 360, Շէնիկ 106, ՍՏժա 85, Ալեան 165, Իշ-
 խնձոր 78, Աղբիւն 66 տներով կայրեն ամբողջովին և
 բոլոր բնակիչները, բացի մաս մը փախստականներէ,
 սրէ կանցունեն: Շատախի, Բերմի, Խուլփի և Խեյանայ և
 Փսանայ գաւառի բնակիչները, ըստ պետական արձանա-
 գրութեանց 146000 հոգի ընդ ամենը կը հեծեն սոս-
 կալի և անպատմելի նեղութեանց մէջ: Բոլոր արտերին
 քիւրդերը տիրանալով գրաւելով տները, անգաստաննե-
 րը, կողպտելով բոլոր ունեցածները, թշուառներու
 մարմնէն խելով մէկ շապիկն էլ մերկ և անպաշտպան
 ցան և ցիր կը թողուն, որ ոլոր գան, սարերու վօայ,
 վայրի գազաններու նման, երանի տալով խաբոյկի վրայ
 բարձրացողներուն և զիրենք շրջապատող կուռ շղթան
 չի թողներ, որ գոնէ փախուստ տան և ազատեն իրենց
 լոկ անձերը....

Նոյն իսկ Մշոյ դաշտի հայ գիւղերը՝ Խզ լաղաձ, Տատ-
 րոզում, Ա. Յովհաննու վանքը, Մառնիկ, Խորունք պաշար-
 ման մէջ են, այնպէս որ չեն համարձակիր երթալ դաշտ
 արտերը քաղելու համար: Քիւրդերը արդէն Տատրոզում
 գրաւած են և միւսներէն կը պահանջեն, որ թողնեն
 իրանց տները, իրանց կալուածները և օրավարները, ել-
 նեն երկրէն, ապա թէ ոչ կեանքները ի զուր տուժելէն
 յետոյ, պիտի յանձնեն այդ ամենը: Կառավարութեան
 բողոքներ ի հարկէ անլսելի կը մնան: Մշոյ մէջ խիստ ձեր-
 բակալութիւնը, Նազիկի երեք հօրեղբօր որդիք, երեք
 հարսներ բռնի տաճկացում Սալի աղայի տուն: Ս. Կարա-
 պետի վանքէն երկու սարկաւազներ (Մովսէս, Յարդին)
 և երեք միաբաններ բանտարկուած են: Կարծ խօսքով
 եթէ ժամանակին ազգու միջամտութիւն չը լինի ամբողջ
 200,000 հայեր պիտի զնան ոտից ի կոխան, առանց
 կարենալու իսկ իրենց արեան բողոքը լսելի ընել լուսա-
 ւորեալ աշխարհին....

Փախստական ուղևոր մը կը պատմէ, թէ Խէյաջանի
 մէջ սէս Յովնան տեսնելով Յ փախստական տղայք՝ 8-10
 տարեկան, կը յանձնէ կառավարութեան, որ կը զլխատ-
 տին Մշոյ հրապարակի մէջ: Քանի այսպիսի տեսարաններ,
 անյայտ, անորոշ.....

Ս Ա Ս Ո Ւ Ն Ի Կ Ո Տ Ո Ր Ա Ծ Ը

ԵՒ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Այն իւրաքանչիւր օր կրկնվող սպանութիւնները,
 կանանց և կոյս աղջկերանց բռնաբարութիւնները, ա-
 ռևանգութիւնները, այն անթիւ, անհամար գազանութիւն-
 ները, որ օր ցերեկով կատարում են տաճիկ և քուրդ
 բաշիբուզուկները 19-րդ դարու վերջում, լուսաւորված
 Եւրոպայի քթի տակ, այն անվերջ աւերումները, կո-
 ղոպուտը, թալանը, հրդեհը, որոնց ենթակայ է Տաճկա-
 Հայաստանի բազմաչարչար, թշուառ, ուժասպառ ժողո-
 վուրդը, այս բոլորը շատ սակաւ է արժանացել Եւրո-
 պական մամուլի ուշադրութեան կամ նոյն իսկ դիտ-
 մամբ նա աշխատել է ծածկել: Բայց երբ այդ կոտո-
 ռածը, երբ այդ սոսկալի բարբարոսութիւններն սկսում
 են ընդունել ահագին լայն շրջաններ, երբ նրանք անց-
 նում են տաճկա-հայերի համար իսկ ստեղծված, ըն-
 դունված «չափ և սահմանից», այն ժամանակ միայն
 Եւրոպական մամուլը «բարեհաճում» է մի քանի հատ
 ու կտոր տեղեկութիւններ տալ. միայն այդ ժամանակ
 դարձեալ բարձրանում է «Հայկական խնդիրը»: Նոյնն
 է և այս անգամ: Սասունում տեղի ունեցած սարսա-
 փելի արիւնհեղութեան և աւերման մասին Եւրոպա-
 կան ըրագիրները տալիս են հետեւեալ տեղեկութիւն-
 ները, որ մենք առաջ ենք բերում համառօտակի:

«Լօնդօնի «Հայկական Ազգասիրական Գիտութիւնը» մի
 աղերսագրով դիմել է Անգլիական արաւաքին գործոց
 մինիստր լորդ Կենբերլուն, հայցելով ոչնչացնել Տաճ-
 կա-Հայաստանում ներկայումս գոյութիւն ունեցող կա-
 ռավարութիւնը, փոխարինել նրան մի նոր կառավա-
 րութեամբ Անգլիայի հաւանութեամբ, որը պիտի զրտ-
 նվի վերջնիս և Բերլինի դաշնագիրն ստորագրող տե-
 րութիւնների անմիջական հսկողութեան տակ:

«Այդ աղերսագրին կցած է և մի նամակ՝ Բիթլիսից
 սեպտեմբերի 27-ին գրած: Առաջարկելով այդ, Գիտ-
 ութիւնն աւելացնում է, որ Հայաստանում կատարվում
 են նոյն գազանութիւնները, ինչպէս մի ժամանակ Բուլ-
 ղարիայումն էր: Նա մեղադրում է տաճիկ կառավարու-
 թիւնը, որի հրամանով տեղի է ունեցել այս կոտորածը:

«Ահա նամակի համառօտ բովանդակութիւնը. Քրդե-
 րը գողացած են լինում հայերի տաւարը, վերջիններս
 յարձակվում են գողերի վրայ, սպանում են նրանցից
 երկու մարդ և վիրաւորում երեքին: Այս ընդհարու-
 մը պատրուակ է դառնում մի կոտորածի: Ջօրքեր են
 ուղարկվում այդ տեղի վրայ: Այդ զօրքերի հրամանա-
 տար փաշան Պօլսից պատուէր է ստացած լինում բնա-
 ջինջ անել հայերին: Ապանված են 6-10 հազար հայեր:

«Մի տեղ չորս հարիւր կին, մի այլ տեղ երկու հա-
 րիւր բռնաբարվում, ապա սուխների և թրերի հար-
 ւածներով մաս մաս կոտորվում: Երեխաներին ցցի են
 հանում կամ գլխատում: Աեց հարիւր երիտասարդ աղ-
 ջկերանց հալածում, քշում են մի եկեղեցի, այստեղ
 բռնաբարում, ապա կոտորում: Արիւնը վտակներով հո-
 սում էր եկեղեցու դռներով:

«Օտարագրի հիւպատոսները քննութիւն են սկսել: Տաճիկ զինուորներից մի քանիսը խոստովանում են, որ հենց իրենցից իւրաքանչեւը սպանած կը լինի մի յիսուն կին: 20-30 գիւղ աւերած, կործանված են: Մարդկանց նաւթով կենդանի կենդանի այրել են իրենց սեփական տան մէջ:»

Միւս կողմից Standard լրագրին միւսնոյն դէպքի մասին Ղարնայից հեռագրում են. «Անկարգութիւնների պատճառը հարկերի վճարման մերժումն է եղել: Մուշի կառավարիչները հրաւիրում են Բիթլիսի նահանգապետին, վերջինս յայտնում է Բ. Իրան և իրաւունք է խնդրում ճնշել ապստամբութիւնը: Բ. Իրանը պատվիրում է Զէքի փաշային կարգի տակ զննել բնակիչներին: Բայց Բիթլիսի նահանգապետը՝ չսպասելով Զէքի փաշայի տեղ հասնելուն, յառաջ է մղում զօրքը և հրամայում է կրակ արձակել: Կոտորածն սկսվում է: Երբ նա վերջանում է, 25 գիւղ աւերված են լինում, գետինը ծածկված մի քանի հազար դիակներով: Բիթլիսի Անգլիական հիւպատոսը մի տեղեկագիր է ներկայացրել Կ. Պոլսի դեսպանին:»

Հաղորդելով այս տեղեկութիւնները, Եւրոպական մամուլի մի մասը իր պարտքը, իր կոչումը վերջացած է համարում: Իսկ միւս մասը, մասնաւորապէս անգլիական լրագիրները, ինչպէս օր. Times, պնդում են, որ անհրաժեշտ է ոչ թէ միայն սանձել, զսպել ոճիրները, ոչ թէ միայն պատժել այդ ոճրագործներին, այլ նաև անհրաժեշտ է կատարելապէս փոխել գոյութիւն ունեցող կառավարութիւնը, որպէս զի կարելի լինի արգելել սոյնանման գազանութիւնների կրկնումը: «Այս դէպքերի շարքը ամօթ, խայտառակութիւն է լուսաւոր աշխարհի համար,» բացականցում է Փրանսիական Figaro լրագիրը: «Եթէ գոնէ այս արիւնոտ տեսարանների պատմութիւնը, ասում է մի այլ լրագիր, կարողանար շարժել Եւրոպայի անտարբերութիւնը, յիշեցնելով Բերլինի դաշնագիրն ստորագրող պետութիւնների պարտքը...»

«Այնտեղ, Հայաստանում, կատարվում են ոճիրներ, որոնք վրէժ են գոչում աղաղակում երկնքից, ոճիրներ, որ պետք է պատժվին օրինակելի կերպով և որոնց կրկնումները առաջը պիտի առնվին ինչ գնով էլ որ լինի:»

Միւս կողմից մի քանի այլ լրագիրներ նոյնպէս խոստովանվելով, որ ամօթ, խայտառակութիւն է լուսաւոր աշխարհի համար այս անցքերը, բայց և այնպէս չեն կարծում, որ Եւրոպան մի որ և է քայլ կանի այդ առիթով: «Եթէ այդ լինէր մի յիսուն տարի սորանից առաջ, աւերացնում է Figaro-ն, գուցէ տեղի ունենար մի արշաւանք, իսկ այժմ՝ բաւականանում են միմիայն մի դիպլոմատիական նօտա ուղարկելով: Այժմ նա, այդ նախկին Եւրոպան, այլ հոգսեր, այլ պարապմունքներ ունի:»

Այո, ճիշտ է նկատում Եւրոպական մամուլը, Եւրոպան այլ հոգսեր, այլ զբաղմունքներ ունի: Նրան ինչ, թէ այնտեղ մի ինչ որ Հայաստանի խորքերում 25-30 գիւղ բնակիչներով հանդերձ այրում, մոխիր են դարձնում, նրան ինչ, թէ այնտեղ բռնաբարում, մորթում, սպանում են, նրան ինչ, որ այնտեղ իր հիւպատոսների

աչքի առջև վեց հարիւր կոյս աղջկերանց հալածում լցնում են եկեղեցին, բռնաբարում, ապա այրում, կոտորում. նրան ինչ որ այնտեղ մարդկային սպանդանոց է բացված և այդ սպանդանոցը մի ամբողջ երկիր է, նրան ինչ որ այն տեղ հազարաւոր անմեղ մանուկներ գլխատվում, ցցի են հանվում, որ մէկը թւենք: Այս բոլորը տեսնում և լսում է Եւրոպան, բայց ինչ է անում նա: Ոչինչ. նա կողարկի Սուլթանի «բարեկիրթ» կառավարութեան մի դիպլոմատիական նօտա և դորանով էլ ամեն բան կը վերջանայ, դորանով նա իւր պարտքը կատարած կը համարի:

Բայց ինչո՞ւ ենք մենք իզուր մեղադրում Եւրոպային: Մի՞թէ միւսնոյն անտարբերութիւնը չի տիրում և մեր, հայերիս մէջ: Ճիշտ է, մենք ևս սոսկալով կը կարգանք բոլորը, ախ ու վաճ կանենք, կը հառաչենք, կը խօսենք մի երկու երեք շաբաթ և ապա մոռացութեան կը տանք այս սարսափելի կոտորածն էլ և ձեռքերս ծալած կը նստենք, մինչև որ բոլորովին կաւերեն, հիմնայատակ կանեն, մինչև որ գլխովին կոչնչացնեն աշխարհի երեսից հայ տարրը.

Ամօթ, հազար ամօթ և նախատինք մեզ և ոչ թէ Եւրոպային.

ՍՍՍՈՒՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵՆԷ ԱՌԱՋ

Թուրք կառավարութեան խորամանկութիւնը.— Ղերջին երկու իրեք տարիներուս ընթացքին մեզ ստրկացած հայուն ցոյց տուած յանդգնութիւն և ինքնապաշտպանութիւնը (իզուր մատնուած ձերբակալները խլել, անկանոն ոստիկանները ծեծել, հետզհետէ բարդուած տուրքերը չը տալ են.) թուրք կառավարութեան դուր չէր գայ, ուստի գիշեր ցերեկ եւք մը կորոնէր տեղոյս ըմբոստ հայոց դաս մը տալու, պատժելու: Ղերջապէս ճարպիկ Բրդաւ և իւր խորամանկութիւնը յուշ բերեց ու հետեւեալ խեղքը բանեցուց:

Գիւրդ վեց եօթը աշիրաթներ Զէյլանի շեյխ Մեհմեմէդի միջոցաւ գրգռելով՝ հանեց հայոց դէմ:

Ո՞վ չգիտեր, որ անցեալ ամրան ափ մը Ցալուրիկցի ժողովուրդեան վրայ քալեցին 3000 քիւրդեր, յիշեալ հայերուն բնաջնջելու: Միւսնոյն ժամանակ երբ քիւրդերը պարտութիւնով ետ կը վերադառնային, թողնելով իրենց դիակներ, իրենց հետ տանելով բաւականին մեծ թալան, յանկարծ (կուռէն երկու երէք օր վերջ) Տիգրանակերտէն, Կինձէն, Երզնկայէն, Բաղէշէն և Մուշէն հրաշքով զօրքեր թափեցան և օգնութեան հասան (ի հարկէ քրդաց) ու պաշարեցին զՑալուրիկ և նորա բոլոր գեղերէն, պատրուակելով, թէ խաղաղութիւնը պահպանելու համար եկած են ինչ մեծ հոգատարութիւն և արագ գործ ունէութիւն, եթէ ինքը կառավանութիւնը խորհրդակից չէր Շէյխին: Բարբախտաբար պաշարումը 10 օրէն աւելի չբաշեց. չգիտենք որ կողմէն ինչ փրէջեց և սև ամպերը փարատեց, եթէ ոչ ըմբոստ հայոց տանց հիմերը արևի դէմ՝ չը բերած, մատարութիւն չունէին հեռասալու:

Մի երկրորդը Շէյխ Աէլլադին.—Նրկին տարաձայնութիւն կայ, թէ քիւրդ աշիրաթներն յիշեալ Շէյխի, երկրորդ շէյխ Աէլլադինի թելադրութեամբ կրկին կ'աւտարատվին անգամ մը ևս փորձել անտէր մնացած հայերը կոտորելու: Անկասկած եմք, որ նորէն թուրքաց կառավարութեան խորհրդովն է որովհետև սա քաջ գիտեանալով, թէ հայոց վրայ քիչ թէ շատ մեկէն ի մեկ զօրք քաշելը քաղաքական կերպարանք կարող է ստանալ, կը ջանայ աշիրաթական կռուի ձև տալ խնդրոյն, որպէս զի քրդաց աւերութենէն մնացածներն ալ ինք զօրքով քանդէ, ըսելով թէ խաղաղութիւնը վերահաստատելու եկած է, բայց ինչ յուսախաբութիւն. արդէն ամեն ինչ հասկցած է և ըստ այնմ պիտի ջանայ գործին որոշ կերպարանք տալ, եթէ մի անգամ անւանական խաղաղութիւնը սկսէ խախտել: Հայ գիւղացիք կըսեն՝ ինչ վնաս մեզ տվին զօրքերը, անոր մի հինգերորդականը չտվին քրդերը, որք աւելի վայրենի են:

Քրդաց հարստահարութիւնը. Պատրգանցի քրդեր Փարակցի տղայ մը կը սպանեն, երբ սա Փարսիսէն հաց շալկած կը վերագառնայ իւր տուն ի միթարութիւն ընտանեաց: Պիմցի 25-30 տուն անութիւնէ և քրդաց հարստահարութենէ ստիպեալ ներքին դաշտ երթալու ժամանակ, բագրանցի քրդեր անոնց վրայ յարձակելով կուզեն թաղանել, բայց Հայոց դիմադրութեամբ ոչինչ կը վաստկին, միայն մի քանի հայեր չարաչար կը վիրաւորվին:

Առհասարակ քրտերը հայերը իրենց ստրուկները և անոնց հողերը իրենց սեփականութիւնը համարելով՝ հայերէն պէ՛լ անունով տուրք կը վերցնեն տարին երեք անգամ: Ամեն հայ տուն իւր աղային կը վճարէ գարնան ծնած ոչխար մը, կաթի համար ամրան ոչխար մը՝ պըրջովի անուամբ, իսկ աշնան՝ հաց և գէր ոչխար մը մնացուի համար: Երանի թէ ամեն հայ տուն իւր պաշտպանութեան համար մի քուրտ աղա ունենար. հայպ մի քանի աղաներ ունի, որոնց իւրաքանչիւրին պիտի տայ յիշեալ տուրքը: Քուրտ աղան եթէ նիւթական անձկութեան մատոյղի կամ դժգոհ մնայ իւր հայէն, կը ծախէ ուրիշ քրտու մը: Ստրուկ հայուն գինն այնքան աւելի արժէ, որքան աւելի տղայ ունենայ: Ատոնց հասուցած բոլոր չարիքներու նկարագիրը մէկ կողմ թողնելով՝ յիշենք աստ մէկ հետաքրքիր կէտ: Ամեն հայ իւր աղջիկը կարգած ատեն աղջկան համար ստացած խալայէն մաս մը իւր քուրտ աղային պիտի տայ: Այդ պարտքը կը կոչվի ա վըն ի: Շատ անգամ տեսնված է, որ հայր մը իւր աղջկայ համար մէկ, ոսկի խալա ստացած է և սակայն ինքն իւր աղային 2-3-4 ոսկի ա վընի տուած է:

Որքան աչքի կիյնայ այն կէտը, որ քուրտը իւր շահուն համար իւր հայուն կեանքը կը վտանգէ, իսկ հայը իւր և իւր որդոց համար օրինակ չառնելու իւր աղայէն:

Քուրտերն, որք ամեն անգամ վայրենութեամբ յարձակում գործած են հայերու վրայ, ոչ այնքան կրօնամոլութեամբ, որքան շահախնդրութեամբ եղած է (իցիւթէ իրենց խիական շահը ըմբռնէին. այն ատեն միացած պիտի լինէին հայոց հետ): Այժմ տեսնելով, թէ հայոց մօտ բան չէ մնացած և եղածն ալ դիւրութեամբ

չեն տար, սկսած են զիրար թալնել: Պատգանցի և Խիսանցի քրտեր միասին կերթան Սըլըվանցի (Պանօքցի) քրտաց ոչխարը կը թալնեն. բայց ասոնք Խաչալկայ կամուրջին մօտ կուռուվ ետ կը խլին. երկուստեք 7 հոգի կը վիրաւորվին: Խիսանցիք կը թալնեն Պօլքիներու (Սասունցի) քարւանէն 8 բեռ հաց ջորիներով, իսկ նոյն քարւանի մնացած 25 ջորիք իրենց բեռներով կը խլէ Պըշարի Խալիլը: Բագրանցի Գագօի Էօմէրը խլած է Սասունցի Պըշարի Միրզօի տղուն այնաղուն և ընկօյվերը: Պրտրցի և Շիկօի տուն ըսած աշիրաթները իրար զարնվեցան. մի մեռած ու մի քանի վիրաւորեալներ ունեցան:

Վայրենի քրտերն անգամ ունին իրենց քաղաքականութիւնը միամիտ հայերը խաբելու համար. օրը անգամ մը սուտ մը կը հնարեն. օրինակ՝ «հայերը ջարդելու ֆիրման ելած է», ևն. ևն. Քանի, քանի անգամ սուլութանը իւր գահէն վար կիջեցունեն, կրնայանեն ու վեր կը հանեն, տեսնելով թէ իրենց շահուն ինչպէս յարմար կուգայ:

Ն Ա Մ Ա Կ Մ Ա Ր Ջ Ո Ւ Ա Ն Ի Ց

Մարզուան, Եւրոպիա, Ամասիա և շրջակայ գիւղորէից հայ բնակչաց վիճակը տաժանելի է և օր աւուր կը ծանրանայ: Բանտերուն խորքէն ծերոց և տղայոց, մեծատանց և աղքատաց հառաչանքները, դրսէն կանանց և մանկանց լաց ու կոծերը մինչդեռ խղճի տէր մարդու սիրտը կը մաշեցնեն, բարբարոս կառավարութեան հայոց անհաշտ թշնամի պաշտօնէից սիրտը աւելի կը քարացնէ և զօրութիւն կուտայ իրենց վայրագութիւնները շարունակել և խապառ ջնջել ոչ միայն հայ անունը այլ և Հայ ժողովուրդը:

Երբ Հմաւոն Մարզուանի մէջ բռնվեցաւ տեղական Պեքիր փաշան իւր անգթութիւնները կրկնապատկեց յօգուտ իւր քսակին. անմեղ անպարտ հայերը խուճախումբ բանտերը լեցուց. ոստիկանաց սաստիկ հրաման տուաւ որ, ուր որ հայ մը, նամանաւանդ հարուստ մը տեսնին՝ անմիջապէս բանտարկեն: Պեքիր փաշայի յիշեալ հրամանը կէտ առ կէտ կատարվեցաւ և ուր որ հայ մը երևան ելաւ, հայութենէ զատ առանց յանցանքի, անմիջապէս բանտարկվեցաւ և բարակ, անհիմն հարցաքննութենէ վերջ՝ մեծ մեծ գուժարներ տալով յիշեալ փաշային՝ գէթ առժամայն ազատ արձակվեցաւ: Երբ Պեքիր փաշան ի պատիւ իւր գործած անգթութեանց և կաշառակերութեան սուլթանէն Ամասիայի միւթասէրիֆ կոչվեցաւ իւր յաջորդը ևս քսակը լեցնելու համար փորձեց կաշառատութեամբ ազատ արձակված հայերը վերստին բանտարկելով ստակ փրցնել: Սակայն երբ իւր քսակը պարպ մնաց, զայրացած՝ սկսաւ հայերն ընկծել. 4-5 ամիս է առանց հարց ու փորձի մութ բանտերու խորշերը թողած է:

Երբ բանտ անունը կուտանք, պէտք է հասկնալ տաժական բանտն իրեն յատուկ ամեն արհաւիրքներով, որ շատ անգամ նկարագրած է, փոքրիկ սենեակ մը, ուր հարկը 10 մարդ կարելի է քնանալ, 20-30 կը լեցնեն:

Բանաէն ազատ կեցող Հայոց վիճակը գրեթէ բանտարկելոց վիճակէն ծանր է. քաղաքին մէջ պտտելու, խանութ բանայ, և առևտուր ընելու, եկեղեցի երթարու համարձակութիւնը չունին: Երբ համարձակին իրենց տնէն դուրս ելնելու, յաճախ կը պատահին թուրքի մը, որ հայու գլուխուն հազար ու մէկ լուտանքներ կը թափէ. հայը պիտի համբերէ, եթէ ոչ անմիջապէս թուրք խուռն բազմութիւն մը շուրջը կը պատեն և ձեռները կապած բանտ կը տանին, սուտ երգմամբ կը հաստատեն անոր չունեցած մեղքերը...

Այլ հայերու համար իրենց պահանջները ժողովել, առևտուր ընել, կամ դիւղերը երթալ, գաղթել անհնարին է. հայք ուր որ են, հոն պիտի մնան, կը տնօրինէ իրատէ մը: Արդէն իրատէի կարօտութիւն ալ չկայ, ինչու որ հայ մը եթէ գիւղ մը երթայ, դեռ իւր առնելիքը չպահանջած, լաւ մը կը ծեծվի և ապա կապ բանտը կը փոխադրվի իբր «կոմիտէ»: Ե՛հ, խեղճ թուրք գիւղացին ի՞նչ մեղք ունի, քանի որ կառավարութիւնն այդպէս կը պահանջէ:

Գաղթել, ոչ թէ օտար երկիր, այլ մերձակայ քաղաք մը, անկարելի է. 5 դրշ. արժող անցագիրը 100 դուրուշով հազիւ կարելի է առնել. եթէ անցագիր առնելով ձամբայ ելնէ, հազար ու մէկ փորձանքներու կը պատահի:

Այս օրերս հայ ննջեցեալ մը կը տանէին գերեզմանատուն. խումբ մը տաճիկներ թաղման հանդիսականները կը քարկոծեն, անէծք, անարգանք կը թափեն հայոց գլխուն և կրօնին, քահանաներուն խաչվառը կը խլեն և ցետերու մէջ կը թաթխեն:

Հայոց այս անտանելի վիճակն աւելի կը ծանրացնեն խումբ մը սևահոգի մատնիչներ, ինչպէս Մարգուանցի Խըրիմցու ընտանիքը, որ սուլթանի թունաւոր ընծաներէն մաս մը ստանալու համար, սուտ մը կը հնարեն, թէ հայերը իրեն 10-12 տարեկան տղան մեռցնելու փորձ մը ըրած են: Կառավարութիւնը, որ այդպիսի լուրերու կըսպասէ անհամբեր, անմիջապէս կը բանտարկէ խումբ մի հայ ևս: Յիշեալ ընտանիքն իրեն յաջողութիւնը տեսնելով՝ կը յայտնէ, որ այլ ևս չի կրնայ այստեղ կենալ, և որ կայսեր ողորմած պաշտպանութեան կարօտ է: Տեղակալին որոշմամբ մի քանի օրէ վերջ Պօլիս կը փոխադրվին և յիշեալ տղան կայսերական ծախքով դպրոց կը տեղաւորվի:

Ահա այս կողմերու հայութեան արդի վիճակը: Քաղց, թշուառութիւն, անպատուութիւն, կաշառք, թալան, բռնաբարութիւն, մատնութիւնք ամեն կողմ:

ՆԱՄԱԿ ԵՒ ԴՈՒՍԿԻՍՅՈՒՅՑ

Եւզոկիոյ սուրհանդակին կողպտովիւր ծանօթ դէպք մ' է սոյն դէպքի վրայ ինչպէս շատ քաղաքներէ նոյնպէս Սերաստիայէն Ալօ բէյը համիտիէի զօրք և ոստիկանաց խումբ մը գալով՝ քաղաքը կը պաշարեն, և փոխանակ լեռները փնտռելու «գոմէթէն» կը սկսեն քաղաքին մէջ խուզարկութեանց: Հայերը ահ ու գողով

ձգելով իրենց տները 10-15 ընտանիք կը հաւաքուին մէկ տուն: Քաղաքը կը խուզարկեն և աչքի ընկած հայերը կը բանտարկեն. միւս կողմէն այգիները կը սկըսեն վարել, հերկել պահլած գանձերը գտնելու համար. ժամագործ Տիգրանի այգիէն 100 ոսկինոց մէծիդիէ կը գտնուի տոպրակով. Տիգրանը կը պնդէ, որ երկիւղէ պահած է իւր ստակը, որուն առանց մտիկ անելու կը բանտարկեն: Կարգը վասակներուն կուգայ 10-12 տարեկան տղայ մը, որ շուկայէն հաց առած, առանց ետին նայելու կերթայ և ուղղակի դուռ մը կը զարնէ, մէկ մ'ալ կը դառնայ կը նայի, որ զինքը երէք հոգի կը լըտեսեն, ճանբան կը շարունակէ. լրտեք տղին ուր երթալը կը հարցնեն, պոռալով կըսէ. ի՞նչ իրաւունք ունիք տունս տարած հացիս իսկ խառնվելու: Յիշեալ ամայի տունը պատսպարվող երեք երիտասարդները տղուն ձայնէն վտանգը կը գուշակեն և հարևան տունը կը ցատկին պատին վրայէն, երկուքը կազատին, իսկ երրորդին ոտքը կը կոտրի, ոյը սողալով ինքզինքը տան մէկ մութ խորշին մէջ կ'ապաստանէ: Տունը կը խուզարկվի, հարիւրապետ մը կաղը կը նըշմարէ և անձնատուր ինելը կառաջարկէ և ատրճանակին հարուածը կ'ընդունի ի պատասխան: Հարիւրապետը գետին կը գորի, ոստիկան մը կը մտնէ, նոյնպէս հարուածով մը ոստիկանն ալ կը գլորի և երրորդ հարուածով երիտասարդը իւր կենաց վերջ կուտայ: Թուրքերը կը կատողին և կը յարձակին տուներու վրայ: Հայք ևս թըքաց դէմ գնելով, գիշերուան ժամը մինչև եօթը կը կռուին և երկու կողմէն գրեթէ 15 մահ և 180 վիրաւոր պատահելով, վերջ կը տրուի: Իսկոյն Սերաստեա կը հեռագրեն. կուսակալը կուգայ և իբրև թէ հասարակութիւնը կը հանդարտեցնէ: Հայք, բողոքականք, կաթոլիկք և յոյնք ճարահատ կառավարութեան կը դիմեն միութեամբ թըքանալու համար. ասոր հետևանքէն լուր չունինք:

Եողջատի զինուորական ատեանը՝ որ գաղատեայ փոխադրված էր, Եւզոկիոյ բանտարկեալք ևս Գաղատեա խրկվելու համար, 18 կառքով շղթայակապ Եողջատ կը բերվին: Բանտարկելոց մէջ երիտասարդ մը հինգ-վեց ընկերներով շղթայէ զուրկ մնացեր է առ ի չգոյէ. երիտասարդը հարիւրապետի մը երկու արծաթ կուտայ, որպէս զի շղթայ մ'ալ գտնելով իրեն զարնէ, ըսելով թէ, քանի որ ոտքերնիս, վզերնիս շղթայ չունինք, Գաղատեա ի՞նչ երեսով պիտի երթանք: Ի վերջոյ գործը կը փոխվի, այսինքն զինուորական ատենին Եւզոկիոյ փոխադրվելու իրատէ ելլելով՝ բանտարկեալք հեռագրաւ մը վերստին յեւզոկեա կը վերադառնան. զինուորական ատեանը յեողջատ կատարած չարութեանց, չարագործութեանց և բարբառութեանց պակասը յեւզոկիա պիտի լըացնէ և իրենց անկուշտութիւնը հայու արիւնով, նրանց արտասուներով և լաց ու կոծով պիտի կշտացնէ:

Կ Ա Ն Ա Ղ Ա Ն Ե Ո Ղ Ջ Ա Գ Ո Ւ Մ

Թիրայր յեղափոխականը 10 ձիաւոր ընկերներով հանդերձ ժուռ կուգար Եոզղադի շրջակայ գիւղերը և թէ ի հայոց, թէ ի խրջլպաշներէն կը յարգուէր ու կը պաշտպանուէր: Թիւրք կառավարութիւնը «մօրուք» անուան տակ այդ տեղի յեղ. պետը և խմբին գոյութիւնը և մինչև իսկ Մազար օղլու գիւզացի Սիմօն և Ագթաղ, Մատենցի յոյնին սպանիչը այն խմբին լինելը գիտէր, սակայն համարձակութիւն չունէր վրան երթալու և որչափ ալ պահեստի զօրաց թիւր ակեցուց շուրջ 2000, ոստիկանաց 400 և Պօլսէն հեծելազօր եկաւ, դարձեալ բաւ չէր այսքան զօրութիւնը «մօրուք» ձերբակալելու, ուստի դիմեց դաւաճանութեանց: Թրքերը փէհրէնկցի Համբարձում քեահիայի տղան Սահակը բռնելով Եոզղադ կը բերեն և Խալիլ բէյին կը յանձնեն: Համբարձում քեահիային Թիրայրին պաշտպան լինելը քաջ ծանօթ էր կառավարութեան. սորա տղան Սահակը վերջին աստիճան կը տանջեն և կը նեղեն և վերջապէս հօր ամեն գաղտնիքները կը խոստովանեցնեն: Թիրայրին նկատմամբ հայրը Համբարձում քեահեան ևս կը բերեն քննութեան. կը հարցաքննեն, ոչինչ յայնժամ առանց որդւոյն անունը տալու, (որովհետև խօսք մը կար, թէ Սահակը թուրքերը մեռուցած են) Խալիլ բէյը Սահակէն բռնութեամբ առած գաղտնիքներուն ամենն ալ կըսէ Համբարձում քեահեային և կը յաւելու. «Եթէ մօրուքը մեզ յանձնես, որ կարող ես, ես քո տղան Սահակը կը գտնիմ և զքեզ ալ կազատեմ, իսկ եթէ հակառակ այս ամենուն չյանձնես, գիտցիր, որ դուն և քո բոլոր ընտանիքդ բնաջինջ պիտի ըլլաք»: Համբարձումը կը զարմանայ գաղտնիքներուն և խորհուրդներուն յայտնուէն և կը նայէ, որ ալ ազատութիւն չկայ, «մօրուքը» կառավարութեան յանձնելու խոստումներ կուտայ և կազատի: Այս ժամուն ի դարման ցաւոցն պատրիարքարանէն Եոզղադ յրկված Տրդատ վարդապետ Պալեանը, առաջնորդ Վեսարիոյ, վրայ կը հասնի և կսկսի գործել ի սաստումն ցաւոցն, ձեռքէն եկած վատութիւնները կը գործէ ընդքօղեալ սգիմով, հայ գիւղերու քահանայ և կրօնաւորները կառավարութեան միջոցով Եոզղադ կանչել կուտայ, խոստում կառնէ հայ գիւղացիներէն կնքոյ տակ, թէ «Եես այսու գօմիթէ չպիտի պահենք, տէրութեան իրաւացի պահանջքը եղող տուրքերուն դէմ չպիտի գանք» ևն. ևն. բոլանդակութեամբ, իւրաքանչիւրը զատ զատ կը խրատէ, առանց կարմրելու կը քարոզէ յեկեղեցուց, թէ «մօրուքը բողոքական է», իբր թէ թուրք եղած ըլլայ, թէ Եոզղադցիք խաբված են, մօրուքը խաբեբայ, իրը մ'է, թէ իրենց հարս ու աղջկուքը նորա յանձնած են, թէ աները աւետարան կարդալը արգելեալ է, թէ ինք կարող է մարդ մը կախաղան տալ և առնել ևն. ևն. Արսլանեան գերդաստանն «վասակաց խումբի» հետ կը միանայ. զինուորական ատեանը ինչ հրահանգ որ տայ, անտարբեր կը կատարէ, ասդին անդին վասակներ կը կարգէ, վերջապէս ամեն կողմեր լրտեսներ կը դրկէ Թիրայրը փնտռելու համար,

որը կը պատրասուէր Եոզղադի շրջականերէն մեկնելու: Իմաց կը տրւի Համբարձում քեահեային. վերջինս Թիրայրին հաւատարիմն էր, լուր կը խրկէ Թիրայրին, որ ձիերը Պահատըրի այգեստանը թողլով, իւր քով գայ. ինք կարող է զինքը պաշտպանել, ինչպէս կը պաշտպանէր առաջ: Թիրայրը այս լուրը առնելուն պէս, կատարեալ վստահութեամբ ձիերը թողլով, կուգայ Համբարձում քեահեային քով, որը Թիրայրին ոտքը ինչպէս լով, կը պատմէ եղելութիւնը և իւր ընտանեաց մօտագայ վտանգը, վերջապէս զինքը կառավարութեան յանձնելու ստիպումը: Թիրայրը պահ մը խորհելէն վերջ կըսէ, թէ Թերզելի երեք օրուան համար կարգադրելու կարևոր գործեր ունի և վերջնելու թղթեր ունի և թէ թղթերը ձեռք անցնին, աւելի մեծ վտանգ կը պատճառէ. կը խնդրէ, որ երեք օր միջոց տայ և իւր գործերը կարգադրելէն վերջ թող յանձնէ զինք կառավարութեան և կուգայ ի Թերզելի, իւր ընկերները ի Թերզելի կը պահէ, ինքն ալ, որ 120 ոսկի ունի եղեր իւր քով, կը խնդրէ գիւղացիներէն, որ այդ 120 ոսկու փոխարէն իրեն ձի մը տան: Գիւղացիները չեն համաձայնիր: Այս միջոցին 1000 ձիաւորներով կը պաշարվի գիւղը: Թիրայրը գիւղին քահանայէն կուզեն և մերձ ի մահ կը ծեծեն, բայց ի զուր ի վերջոյ գիւղը խուզարկելով, կը ձերբակալեն Թիրայր և տղաք և յաղթանակաւ մը կը բերեն Եոզղադ: Թող պարծենան վասակներն իրենց յաջողութեանց համար:

Բանտարկութեան առաջին փոշերը Թիրայրը կը տանջեն, Եոզղադի գործող մարմինը խոստովանեցնելու համար և մասամբ իւր կը յաջողին: Առանց որ և է մարդու մը տեսնվելու, 17 օր բանտարկելէն վերջ, մարտ 24 հինգշաբթի փոշեր կը բարձրացնեն ի կախաղան: Գիւղը ժամը 6-ին վար կառնեն և կը տանեն յեկեղեցին: Տրդատ վարդապետ կը հրամայէ, դիակը բողոքականաց, ժողովարանը կը տանին, սոքա ալ Տրդատայ դէմ զայրացած չեն ընդունիր, և դիակը քարերու վրայ քաշկրտելով, մի քանի թուրք հասարակաց գերեզմանէն դուրս փոս մը փորելով, կը ձգեն և կը ծածկեն հողով: Միւս փոշերը թրքերը գերեզմանը բանալով մեռեալը կը կողոպտեն. կը հանեն հագուստը, ոտնամանը, մատանին, ժամացոյցը և անթաղ թողլով կերթան կառավարութիւնը նորէն թաղել կուտայ: Ահա այս պէս կը կնքէ իւր մահականացուն ողորմելին Թիրայր, իսկ Տրդատ դահիճն ալ իւր պաշտօնը լրացուցած լինելով միւս օրը փառաւորապէս կը ձամբորդէ դէպ ի Վեսարիա իւր պշխատութեանց փոխարէն թուրք շողորթութեան արժանացած:

Համբարձում քեահեային տղան, Սահակը, որոյ Խալիլ պէյին տունը սպանված լինելը կը պատմուէր, բռնութեամբ կը թուրքացնեն և կը թլպատեն, մօտերս ազատվելով ուղղակի կը միանայ ասպատակաց խմբին:

Գաշնակցութեան անծանօթներին խնդրվում է թըրք թակցութեան և նուիրատվութեան համար գիմել:
L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա. Գաշնակցութեան ազատ սպարան